

Արմեն Սմբատյան ԿԸՅ քարտուղար

Ծնվել է 1977թ. սեպտեմբերի 26-ին Եղեգնաձորում:

1994թ. գերազանցությամբ ավարտել է Եղեգնաձորի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

1994 – 1999թթ.՝ Երևանի պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտ, տնտեսագետի որակավորում:

2001-2003թթ.՝ ՀՀ ԳԱԱ Տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտուրա:

2004-2007թթ.՝ ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի իրավաբանական բաժին, իրավագիտության մագիստրոս:

1998-1999թթ. պայմանագրային հիմունքներով աշխատել է ՀՀ բանկային համակարգում:

1999-2001թթ. ծառայել է ՀՀ ազգային բանակում:

2002 -2007թթ. եղել է շինարարական ընկերության փոխտնօրեն:

2004թ.՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի գյուղական համայնքների զարգացման միավորում-գյուղական համայնքների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման, մշակման և համայնքների անձնագրավորման փորձագետ:

2006-2007թթ. «Ազգային տարի» ՊՈԱԿ-ում զբաղեցրել է աշխատակազմի ղեկավար-գլխավոր մենեջերի պաշտոնը, եղել է Ֆրանսիայում Հայաստանի տարին ազդարարող «Շառլ Ազնավուր և ընկերներ» համերգի գլխավոր մենեջեր:

2007-2010թթ. եղել է ՀՀ աշխատանքի պետական տեսչության Երևանի տարածքային կենտրոնի պետի տեղակալ, 2010- 2011թթ՝ ՀՀ աշխատանքի պետական տեսչության պետի տեղակալ:

2010-2011թթ.՝ ՀՀ աշխատանքի պետական տեսչության աշխատողների արհեստակցական միության նախագահ:

2007-2011թթ.՝ ՀՀ թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ:Դասավանդել է ՀՀ համայնքային ծառայության վերապատրաստման, ՀՀ ընտրական հանձնաժողովների անդամների լիցենզավորման դասընթացներում:Երկու անգամ արժանացել է ՀՀ վարչապետի շնորհակալագրի:

2011թ. հուլիսին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ, ընտրվել



հանձնաժողովի քարտուղար:

Ամուսանացած է, ունի մեկ որդի: